

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆՈՐ ՆՈՐՔԻ

ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ձեր ս.թ. փետրվարի 5-ի թիվ --- գրությամբ ներկայացված՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 2014 թվականի հունվարի 30-ին կազմված «Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ» թիվ ---- արձանագրության վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

«Ա» ՍՊԸ-ն դեռևս 2013 թվականի հունվարի 31-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում սահմանված կարգով ներկայացրել է հայտարարություն ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին, որի ստացման վերաբերյալ հարկային մարմնից ստացել է համապատասխան ծանուցում: ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորք հարկային տեսչության կողմից ----- ընկերությանը տրվել է հավաստագիր առ այն, որ «Ա» ՍՊԸ-ն 01.01.2013 -ից մինչև 2013 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ հարկային մարմնում հաշվառված է որպես ավելացված արժեքի հարկ վճարող:

Հետևաբար, ընկերությունը վարչարարություն իրականացնող մարմնի կողմից ստանալով որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառված լինելու փաստը հաստատող համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ, այն հիմք է հանդիսացել ընկերության համար իր հետագա գործունեությունը կազմակերպելու համար, այդ թվում՝ դուրս գրել հարկային հաշիվներ և ներկայացնել ավելացված արժեքի հարկի հաշվարկներ (բացառելով շրջանառության հարկ վճարող համարվելը): Ավելին, Ընկերությունը հարկային մարմինների կողմից (միասնական ծրագիրը շահագործվում է հարկային մարմինների կողմից) ներառվել է ԱԱՀ վճարողների ցանկում և ՀՀ մնացած տնտեսավարող սուբյեկտները ևս Ընկերությանը ճանաչել են (էլեկտրոնային հաշիվներ դուրս գրելու միասնական ծրագրին միանալու միջոցով) որպես ԱԱՀ վճարող:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի մեկնաբանման հետևանքով առաջ եկած խնդիրների վերաբերյալ հարցը քննարկման առարկա է դարձել ՀՀ վարչապետի մոտ 2013 թվականի նոյեմբերի 27-ին և 2014 թվականի փետրվարի 3-ին կայացած ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստում: Հարցի կարգավորման վերաբերյալ ՀՀ վարչապետի կողմից հանձնարարվել է կարգավորել խնդիրը բոլոր

այն դեպքերում, երբ տնտեսվարողները 2013թ-ի սկզբին ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և ԱԱՀ հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն, սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից պահանջ է ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, կարող են դիմում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ վերականգնելու 2013թ-ին իրենց ԱԱՀ վճարող հաշվառվելու փաստը:

Ելնելով վերոշարադրյալից, ինչդրում ենք ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՆՈՐ ՆՈՐՔԻ հարկային տեսչության 2014 թվականի հունվարի 30-ին կազմված թիվ -- Արձանագրությունը վերանայել և անվավեր ճանաչել:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ՝

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ